Ծուշանիկ Կուրղինյան

Հիվանդ օրերի թշվառ երգիչներ . . .

Հիվանդ օրերի թշվառ երգիչներ,
Որ մեծ սրտերիդ, որ ծով սրտերիդ
Սնունդ մնացին կսկիծ-մրմունջներ,
Թախիծ՝ դեմքերիդ:

Որ աստվածածին ոգեշունչ շնչի
Գոռ հեղեղները լափեցին անհագ,
Փարթամ երազի, հույզի ու տենչի
զմայլիչ փափագ:

Որ ծաղիկ-գարնան, սիրո հուրհուրանք,
Խոր զեղմունքներով երկնատու տաղանդ՝
Վշտի սև ծովում . ցավ ու տառապանք
մնաց ձեզ ավանդ:

Որ տոչորվելով ամենքի վշտից՝
Հանուր դաշնության թույնը ծծեցիք,
Ու կտոր թղթին, գրչին կենակից
մենակ մնացիք:

Ես ձեզ եմ երգում, վաղահաս ձմռան
Շնչով դալկացած ըմբոստ հյուսվածքներ՝
Ձե՛զ, որ սև կյանքում դառել եք լալկան

վեհ լուսատուներ:

Ես ձեզ եմ երգում, եթերի լարեր,
Վշտերի շնչից բթացած բեկ-բեկ,
Ձեր ծով սրտերի ծփանք լուսաբեր
կյանքի սրտաբեկ . . .

1908 թ. 16 նոյեմբերի